ձերայնոց. զի դիւրաւ և շուտով կատարիցի, և մի լինիցի ձեզ այնքան ձանձրութիւն։ Իսկ և պատճառն թէ վասն էր խնդրէ փութով լինիլ, այս է՝ զի սրբազան Պապն, որոյ յատուկ գիտութեամբն և հրամանաւն եղև տպագրութիւն ճառիցս այսոցիկ, ստէպ հարցանէ այսմիկ Նախորդի, արդեօք աւարտեալ իցէ։ Դարձեալ Գերյարգելի Աբբայ Հօրն մեծաւ յարգութեամբ և շնորհակալութեամբ ողջոյն մատուցանեմ։ Եւ յանձն արարեալ զիս աղօթից ձերոց սրբազանից, մնամ

Վերապատուութեան քում

Պատրաստական յամենայնի
Նուաստ ծառայ
Ստեփաննոս Վարդապետ

Ի Հռոմ
յամի տեառն 1756
մայիսի 22

ՃՂԳ.

Բ

Վերա. և գերյարգոյ Տեառն Տեառն Ստեփաննոսի Աստուածաբանութեան վարդապետի խնդալ ի տէր

ՁՎեհալուստրի գիրն, և ընդ նմին զրղձալի թուղթն Վերապատուութեանդ ընկալեալ, ծանեաք զգրեալսն. և յանձն առաք զյարգելի կամս նորա կատարել։ Արդ՝ ոմանք ի Վերապատուելի հարց մերոց, որք այսպիսի գործոյ կարողք են, ձեռնարկին յօժարութեամբ զգործս զայս առնել. վասն զի ի քաղաքի աստ արտաքոյ մենարանիս մերոյ ի հայս ոչ գոյր ոք որ կարող իցէր զայսպիսի գործս առնել։ Բայց քանզի իտալական լեզուն ոչ այնչափ յստակ ձևացուցանէ զհայկական գրաբառ լեզուն, վասն այսորիկ ի լատին բարբառ կամեցաք թարգմանել, թուելով մեզ նոյնչափ հաճոյ լինիլ Վեհալուստր Վսեմութեանն՝ լատինականն՝ որչափ իտալականն. թէպէտ նա ի գրի իւրում զիտալականն առաջադրեալ էր մեզ։ Եւ ահա ընդ պատասխանւոյն մերոյ գրոյ նորին՝ և ընդ նմա առաքեցաք առ Վսեմութիւն նորա՝ զգրուածսն երկուց հեղինակաց. այսինքն է, զԽորենացւոյն և զայսմաւուրին՝ թարգմանեալ ի լատին, և զհայերէնն գրեալ ի միասին։ Եւ մնացին երկուց հեղինակաց բանքն, այսինքն Բուզանդին և Ճառընտրին, որք հետևաբար թարգմանին, և առաքեմք առ Վսեմութիւն նորա։ Եւ թէպէտ հոգամք, որչափ հնար է, փութով աւարտել, սակայն և այնպէս փոքր մի յապաղի՝ յաղագս խրթին և երկարաձիգ լինելոյ բանիցն։ Արդ՝ ի թարգմանեալս յայսոսիկ ոյք ոյք բանք երևեսցին անստոյգք՝ զայնոսիկ ընդ մնացեալ հեղինակաց բանիցն բաղդատելով՝ ունի Վսեմութիւն նորա ենթադատել, և զստոյգսն որոշել, զի թարգմանիչքն անստգիտ թարգմանելոյ աղագաւ՝ զինչ և որպէս գրեալ է, զայն այնպէս թարգմանեցին։ Խորենացին չունի զամբողջ պատմութիւն վարուց սրբոյն յակոբայ, այլ այնչափ՝ որչափ գրեցաք։ Գերյարգելի աբբայ հայր մեր բազմաւ սիրով զողջոյն մատուցանէ Վերապատուելութեանդ։ Եւ արդ՝ յանձն արարեալ զիս ս[ր]բազանից աղօթիցդ վերջ տամ բանից իմոց։ Եւ մնամ

Վերա. քում
պատրաստական յամենայնի
Նուաստ ծառայ Հ. Մ[ատթէոս] Վ.։

Ցամի տեառն 1756
Յունիսի 5
ի Վենետիկ